


2042 442



Հրատարակելի Գրութիւններ Ղրկել 1326 W. Huron St., Chicago, Ill.

Ասորիկա պիտի արգարացնէ Միութեան գոյութիւնը եւ աւելին՝ պիտի դնէ զայն շիտակ ճամբուն մէջ, որ պիտի առաջնորդէ մեզ Չնգուշի վերաշինութեան մէք հայրենի հողին վրայ:

Լիալոյս ենք թէ Պատգմ. Ժողովը պիտի յանգի գործնական որոշումներու եւ յառաջիկայ գործունէութեան համար մշակէ լուրջ ծրագիր մը, որ պիտի ստարէ Միութեան յառաջդիմութեան եւ հզօրացման:

Յանդուրժիւն կը մաղթենք Պատգմ. Ժողովի աշխատութեանց:

ՀԱՄԵՍ ԹԵԼԱԴՐՈՒԹԻՒՆ ՄԸ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՊԱՏԳՄ. ԺՈՂՈՎԻՆ ԱՌԹԻՒ

Անշուշտ այս տարուան Պատգմ. Ժողովը նման անցեալ ժողովներու, բաւական չունէ ու ժամանակ պիտի վատնէ Հայաստանի մէջ Նոր Զնգուշը կառուցանելու հարցին շուրջ: Բայց եթէ անկեղծ ըլլանք խոստովանելու իրականութիւնը, պիտի տեսնենք որ մեր Միութեան ուժերը եւ միջոցները բընաւ չեն ներեր այս անիրականալի հարցով զբաղելու: Ճիշտ է որ ամէնքիս սրտին մօտիկ է Նոր Զնգուշ մը ունենալ Հայաստանի ազատ երկնքին տակ, բայց փափաքիլը միայն չի բաւեր, մանաւանդ մեզի նման տկար ու փոքրաթիւ Միութեան մը համար, որ ոչ պատրաստի զրամ ունի եւ ոչ ալ եկամուտներու աղբիւր:

Ներողամիտ թող ըլլան իմ հայրենակիցներս, եթէ ես այս առթիւ տարբեր թելադրութիւն մը ընեմ, որ մեր ուժերու սահմանին մէջ կ'իյնայ:

Անշուշտ ամէն հայ, ինչպէս նաեւ մենք Զնգուշցիներս, գիտենք որ այժմ արդէն իրողութիւն դարձած է Հայաստանի մէջ՝ Հ. Բ. Ը. Միութեան նախաձեռնութեամբ Նուպարաշէնի կառուցման խնդիրը, որ մօտ ժամանակէն պիտի սկսի մարմին առնել: Ես կը խորհիմ թէ ամէնէն լաւագոյն եւ օգտակար կերպն է մեր աշխատանքներն ու գործելակերպը տանիլ եւ կապել այս մեծ գործին եւ առաջին առիթով հասկըցողութեան դալ Բարեգործականի վարիչ մարմնոյն հետ, որպէս զի մեր Միութեան հաշուոյն քանի մը տուններ շինելու արտօնութիւնը տրուի մեզի՝ ուղղակի Նուպարաշէնի մէջ:

Ես կը խորհիմ թէ ասիկա ամէնէն գործնական կերպն է մեզի համար, քանի որ քաղաք մը շինելու կարողութիւնը չունինք, բայց կրնանք քաղաքի մը մէջ քանի մը տուններ շինել:

Կը փափաքենք որ Պատգմ. Ժողովը իր լուրջ ուշադրութեան առարկայ ընէ այս խիստ կարեւոր հարցը:

Վէսթ Նիւ Եորք

Ա. ՄԻՆԱՍԵԱՆ

ԹԵԼԱԴՐՈՒԹԻՒՆ ՄԸ ՊԱՏԳՄ. ԺՈՂՈՎԻՆ

Օգոստ. 4-5ին տեղի պիտի ունենայ Զնգուշի վերջ. Միութեան Ե. Պատգմ. Ժողովը Նիւ Եորքի մէջ: Անշուշտ իւրաքանչիւր մասնաճիւղի եւ նախաձեռնողի անհատ Զընգուշցիի աւագ պարտականութիւնն է մտածել եւ խորհիլ թէ ի՞նչ պէտք է ընել եւ կամ ի՞նչ օգտակար թելադրութիւններ պէտք է զրկել Պատգմ. Ժողովին, որպէս զի այդ ժողովը կարենայ Միութիւնը զօրացնել եւ անոր գործունէութեան զաշտը ընդլայնել:

Նկատելով որ Միութեանս հիմնական նպատակը գէթ ներկայիս իրականացնելու համար շատ մը դժուարութիւններ կան, իմ անձնական մտածումս եւ թելադրութիւնս է մեր ծրագրին հիմնական նպատակը անփոփոխ պահելով հանդերձ, առ այժմ աշխատինք ուրիշ միջոցներով օգտակար դառնալ մեր դժբախտներուն:

Նախ պէտք է Հայաստան զրկել այն անձերը, որոնք փաք կը յայտնեն: Զանոնք Հայաստանի մէջ տեղաւորելու պիտի կարենանք մեր նպատակի իրականացման առաջարկ առնել, որովհետեւ Նոր Զնգուշի մը հիմը դրած լանք այսպէսով:

Ներկորդ թելադրութիւնս է մեր ծրագիր-կանոնադրութիւնը մը աւելցնել, որ թույլատրէ նիւթական օգնութիւն ընել մեր կարօտ հայրենակիցներուն, հոս թէ արդարեւ սահման:

Անձնապէս նկատած եմ որ, եթէ Միութիւնը այսպիսի թելադրանքներու ուշադրութիւն ընծայելով զանոնք ծագրելու աշխատի, Զնգուշ վերջ. Միութիւնը աւելի կը զօրանայ եւ հայրենակիցներ առաւել գուրգուրանալու մօտենան Միութեան:

Երբ Զնգուշցիներու ամբողջ հաւաքականութիւնը բարոյական եւ նիւթական աջակցութիւնը բերէ, այն ամենք գիւրդութեամբ պիտի կրնանք շինել Նոր Զնգուշ յաւերժացնել մեր ծննդավայրի անցեալ փառքերը:

Լօրէնս

Մ. Մ. ԳՐԻԳՈՐ

ԲԱՑ ՆԱՄԱԿ «ԾՈՎԱՌՑԻ»ԻՆ

Կարդացինք «Անբեւոյթ Թշնամին» վերտառութեամբ յօդանուն մէջ Ամերիկայի դուրս բնակող Զնգուշցիներ մտաբացկանի զին դասելով՝ կարգ մը թելադրութիւններ բրած էիք իբր թէ մեզ հետ Ամերիկացի Զնգուշցի մեր հայրենակիցներուն:

Պրն. «Ծովառցի», անշուշտ կը ներէք, երբ րոտմ թէ զաղուք մէջ բնակող Զնգուշցիներս ոչ մտաբացկաններ ենք եւ ոչ ալ ձեռք շարունակ բացած Ամերիկայէն դրամ կ'ակնկալենք ապրելու համար: Եթէ պատահած է որ Ամերիկացի մեր հայրենակիցները պարբերաբար առնեն իրենց կողմէն մը մեզի օգնած են, այդ օգնութիւնը բնաւ փոփոխութիւն մը չէ մտայնացած ոչ մեր նիւթական վարժութիւնը եւ ոչ ալ մեր աշխատանքներու թույններու տեսիլներէն: Մենք մնացած ենք նոյնը եւ միշտ սպասինք մեր աշխատանքներուն, այդպէսով է որ ցարգ ապրած ենք եւ կ'ապրեցնենք եւ մեր ընտերները:

Յետոյ, մենք բնաւ ծուլութեան վարժուած չենք ու չենք ալ վարժուիլ, ինչպէս դուք կ'ակնարկէք մեր դրութեան մէջ: Միայն այս տեղերու գործերը այնքան առատ ու շարունակական չեն, ինչպէս որ Ամերիկայի մէջ են. այս աշխատանքի պակասն է որ մեզ գործէ կը պահէ: Ահա այսպիսի պարագաներու ստիպումով է որ յաճախէն նիւթական օգնութեան պէտքն ունեցած ենք: Տուէ՛ք մեզի շարունակական աշխատանք, այն ատեն մենք կ'աշխատինք օրական 16 ժամ եւ լին ալ ու մեր հացը կը ճարենք մեր աշխատութեամբ:

Մենք հոս կ'աշխատինք շատ անդամ շատ երկար ժամեր եւ գործերնիս խիստ դժուար են: Սակայն վարձատրութեան նուազ բայ կը մեզ ինայողութիւն մը չապահովեր, որով երբ գործէ դուրս կ'այնանք՝ կրկին կ'ստիպուինք իրարօգնութեան յոյսեր ունենալ, ինչպէս մտաբացկանութիւն չէ եւ ոչ ալ ծուլութիւն, այլ հարկադրանք անհրաժեշտ պայմաններու:

Մենք ալ ձեզի չափ Ծովառցի ենք եւ այն Ծովառցի օգն ու ջնուր ալ տողորած է աշխատանքներու թելադրութեամբ ու հայրենասիրութեամբ, այժմ պարագաները այնպիսի կողմնակող մը դատաւորուած են որ զիբերը քիչ մը կը տարբերին իրարմէ: Այսչափ...:

Մարտէյլ, Ֆրանսա

ՊԵՏՐՈՍ ՏԱՐՈՒՆ

ԿԸ ՓՆՏՈՒՒԻ

Պրն. Յովհաննէս Մինասեան, Զնգուշցի (բայց իմարերդ մենք տարի մը առաջ Պէյրութ եղած է, յետոյ մեկնած է Ֆրանսա. իրմէն օրէն չեւ հիմա մէկ նամակ ստացուած է. երկար ատենէ ի վեր իր մօր ընտանիքին անպատասխանի մնացած են: Հասցէն գիտցողներ հաճին լուր տալ Սառա Մինասեանի՝ քիւ Տ Պապ Էլ Ֆարաճ, Նուրիա:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Սիրելի Հայրենակիցներ,

Ծովառանձնը շատ սիրելի է ինձ, անոր համար որ իմ խոստարագ օրերս կը վերլիչեցնէ ինձ:

«Ծովառ»ի վերջին թիւին մէջ կարդացի շատ ցաւալի բերք՝ միջադէպի մը մասին որ ծագած է դրամական խնդրներէ: Գէորգեան, Էրմոյեան եւ Գառիկեան երեք անձնաւորութիւններու գերդաստանները շատ մօտէն կը ճանչնան, շատ վեհանձն մարդիկ էին անոնք: Ես այս երկիրը եղնորու առաջիններէն մէկն եմ եւ բոլոր Հայրենակիցներու տէն ծանօթ, ամէն բարենպաստակ ընկերութիւններու մէջ լալով՝ պաշտօն ալ վարած եմ եւ շատ հպարտ կ'ըզամ ըլլալ թէ ոեւէ դրամական խնդրոյ յարուցման չեմ հանդիւստ: Մեր սիրելի պարոնները ինչպիսի զգացում ունին որ իր Հայրենակիցներու մեծ դժուարութիւններով ձեռք բերած եւ ազնուօրէն կարօտեալներու պէտքին յատկացուցած րամը փաստաբաններու կ'ուզեն տալ: Ասիկա շատ ամօթ իրենց: Ես այս պատեհութեամբ կուզամ ըսել թէ լաւ է Ուրի անուն ձգել քան թէ քանի մը հազար տոլար ունենալ: Ես իբրեւ անկեղծ Ձեռուլցի մը ամէն ժամանակ ջանացած մ Ձեռուլցիներու անունը վեր պահել ու պահած եմ մինչեւ յսօր: Պիտի թելադրէի Պրնք. Գէորգեանի, Էրմոյեանի եւ Գառիկեանի, որ ազնիւ գտնուին եւ դրամը յանձնեն պատան մարմնոյն:

ԱԽԵՏԻՍ Պ. ՏԱՂՏԻԿԵԱՆ

Եկեղբ, Քալիփ.

ԻՆՁՈՒ ԶԶԱՐԿԻ

(ԴՐՈՒԱԳ ՄԸ ՊԱՏԱՆԵԿԱՆ ԿԵԱՆՔԵՍ)

Տանեւերէք տարեկան կամ քիչ մը աւելի կայի, երբ մեր Թաղեցի զայոց հետ Հայոց Գալօնից Էօրդմէն լաքի գտնեցաւ կը խաղայինք:

Երկու մարդոց երեւումով ընդհատուեցաւ մեր այդ օրուան խաղը. Եսօրը անցած էր արդէն: Այս եկտորներու առաջինը երկարահատակ, պիտակախառն սրածայր պիտով, լայն ու խոշոր բացուած աչքերով, Էսին շուրջ չիք մը փաթեցած, շաւաղէ վերարկու եւ տախտակ հաղած երկու թեւերն ալ կոնակին վրայ կ'պսած՝ իր ձեռքին մէջ հաստ դաշակ մը կը կրէր: Ան մեղի ծանօթ էր Անթի Պէկ անուամբ:

Երկրորդ մարդը, որ առաջինին կը հետեւէր, խեղճուկ երեւոյթ մը արեւէր եւ գրեթէ տարիքը առած, կորագածակ եւ մէկ աչքն ալ բնականօրէն քիչ մը զոց էր: Այս մարդն ալ կը կոչուէր Գըսքլամ Խաչո:

Այս երկու մարդոց առաջինը յոխորտալից երեւոյթով մը կանգնելով Հայոց Գալօնից չեմիքին վրայ, ներքը նստող ծերուկ Ձուլճի Խաչին հրամայեց որ իրեն ընկերացող Դըսքլամ Խաչին տալը դահեկանը ալ իսկոյն: Ձուլցի թէ ներսէն ինչ պատասխանուեցաւ, սակայն տեսնելով որ Պէկին վատապանը սկսաւ դրոճել, ուժգին հարուածներ տալով երացած (բայց քաջ եւ պատուաւոր անցելի մը տէր) Ձուլճի Խաչանուկի մարմնոյն, թրքալայիկ լուսանքներու տարափ մըն ալ տեղացելով:

Այս անիրաւութիւնն ու բռնակալութիւնը իմ պատանի հոգիս խռոցին, զգացի որ արիւնս կ'եռայ երակներուս մէջ, անզգալաբար մօտեցաւ գետնին հողը քարի մը եւ մազ մնացած էր որ վերցնէի եւ այդ դաշակին դիտուն զարնէի, երբ յանկարծ անհամարձակութիւն մը կաշկանդեց ձեռքերս. վայրկեանայէս մտքէս անցաւ թէ Ձուլճի Խաչանուկին թողը բրահամ Գալօնեան տունն է թերեւ: Թաղեցիներս մեծ հաւատք ունէինք թէ երիտասարդին վրայ, որդէս պատուաւոր, քաջ, յաղթակազմ, կըլէ չլախող ու զէնքի սիրահար մէկը, որ հաղիւ 22 տարեկան էր: Կոխը դռնէն դուրս փողոց ելած էր արդէն եւ հոն խոնուած բազմութիւնը հանդարտութիւն կը խնդրէր Պէկին:

Գացի Հայոց Գալօնից տունը, ստուգելու համար թէ Աբրահամը քոք հոն էր: Այո, Երիւրի նախնին գուլպաները սրունքներին վեր քաշած, ոտամանին փոշիլը դուրս ցցած՝ յայտնի վրէժխնդրական արայախոտութիւն մը ունէր դէմքին վրայ: Ծիւղ նոյն պահուն դռնէն դուրս տոկեց եւ հասաւ Պէկին ետեւէն: Պէկը Բրթո-ձուլարենց գուլպան իր ար կ'երթար յաղթական քայլերով: Աբրահամին ալ բազուկը օդին մէջ

բարձրանալը տեսայ միայն եւ արդէն Պէկի խոշոր մարմին ճամբէն դուրս առուի ցեխին մէջ է: Աբրահամ բռնեց հրէշի մէկ ոտքէն եւ զուլախն ի վար քաշեց մինչեւ փոնջի Պաղտօնից կից աղբիւրին դուռը, ուր ձգեց ցեխի եւ արիւնի մէջ թաթախուն: Հոս իմ խոռոված հոգին զովացաւ, իսկ տարիքին առած մարդիկ եւ կնոք սկսան իրենց դռներէն ներս մտնել եւ պինդ դոցել, ձեւացնելու համար թէ անտեղեակ էին պատահածէն:

Մեր Թաղեցի քաջ ու կտրիճ Աբրահամը սակայն, դնաց կառավարութեան եւ խոստովանեցաւ թէ անիրաւ վարմունք ունեցող Հիւսէյին Պէկին տուած էր օրինաւոր պատիժը իր իսկ ձեռքով եւ կառավարութեան պաշտպանութիւնը կը խնդրէր փոխադարձ վրէժի մը պարագային:

Ձեռուլցի թուրքն ու կառավարութիւնը ծանօթ էին անմախ ու արիւնքալար Աբրահամին եւ պաշտպանութեան փոխարէն զայն դատաւար տեցին բանտի ամենախիստ տանջանքներու եւ ձեռնակապերով զրկեցին Ձեռուլցի բանտարկելու համար: Աբրահամ 20 տակի տուգանք վճարելով ազատեցաւ բանտէն, իսկ Պէկը մնաց աղաւթ ու անպատիժ:

Այն օրէն ի վեր շուրջ 17—18 երկար տարիներ անցած են, բայց դեռ ինդոս դէս կը տանջէ թէ ես ինչո՞ւ վարանեցայ անիրաւ մը հարուածելու եւ մինակ թողուցի Աբրահամը: Եթէ դիմք կանխած ըլլայի իմ քարս դործածելով, թերեւս պատճառ դառնայի որ ան չտանջուէր բանտին մէջ եւ նիւթական ահագին վնասի ալ չենթարկուէր:

Մտնեցած էի քարին ու չէի գործածած զոյն, ահա պակաս դործ մը որ շարունակ պիտի յիշեցնէ ինձի իմ թերութիւնս:

ՍԵՒ ՔԱՐ

ՊԱՏԱՍԽԱՆ՝ ՀԱԼԷՊԻ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

«Ծովառ»ի Յուլիսի թիւին մէջ կարդացի Հալէպի վարչութեան կողմէ գրուած «Ուր որ անկ է» վերնագրով գրութիւնը:

Կը ցաւիմ որ Հալէպի յարգոյ վարչութեան գրութիւնը անպատասխանի մնացած է Ֆիլատէլֆիայէն, պարզ այն պատճառաւ որ արդէն գոյութիւն չունեցող հին վարչութեան գրութեան է այդ գրութիւնը: Պարզապէս «բարձի տակ» պահուած է զայն եւ անտեսուած:

Կը խնդրենք որ Հալէպի մասնաճիւղը գիտնայ թէ նոր վարչութեան հասցէն հետեւեալն է՝ 319 E. Cornwell St., Philadelphia, Pa., U. S. A.: Մենք ուրախ պիտի ըլլանք իրենց հարցումներուն բոլորին ալ պատասխանել:

Ի Դիմաց Ձեզոյն Վերջ. Միութեան ֆիլատէլֆիոյ Մասնաճիւղին Ատեմապարի՝ Ս. Յ. ՊԱՊԵԱՆ

ՇՆՈՐ ՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Խորին շնորհակալութիւն կը յայտնենք մեր բոլոր բարեկամներուն, որոնք ազնուաբար մեզի հետ խնդակեցան եւ մեզ շնորհաւորեցին հեռագիրներով՝ մեր ամուսնութեան առթիւ:

Շնորհակալ ենք նաեւ Ձեռուլցի Վերջ. Միութեան ֆիլատէլֆիոյ մասնաճիւղէն, իր նուիրած պատուական ծաղկեփունջին համար:

Երախտապարտ ենք նաեւ մեր Նիւ Եորքի ազնիւ բարեկամներուն, Ձեռուլցի Վերջ. Միութեան Կեդր. Վարչութեան երկու անդամներուն եւ մեր «Ծովառ»ի յարգելի խմբագրին, որոնք ազնուաբար մեզ պատուեցին իրենց ներկայութեամբ մեր հարսանիքին:

Շատ շնորհակալ ենք նաեւ պատուական «Ծովառ»էն, որ արձագանգ տուաւ մեր հարսանիքի նկարագրութեան:

ՏԵՐ ԵՒ ՏԻՒ. ՍԻՄՈՆ ՊԱՊԵԱՆ
Ֆիլատէլֆիա, Յուլիս 10, 1928

ՆՈՒԻՐ «ԾՕՎԱՌ»Ի

Պրն. Խաչատուր Սարեան, Տիթրոյթէն, 4 տոլար կը նուիրէ «Ծովառ»ի: Մեր շնորհակալութիւնը:

ՁԵՂՈՒՇՑԻՆԵՐՈՒ ԿԵԱՆՔԷՆ

ՖԻԼԵՉՆՕ.— Երևանի 15-ին Տէր եւ Տիկ. Խ. Ս. Սըրբմեանի որդին Լեւոն Խաչ սեւուր լրացնելով իր վկայականը առաւ: Աչքը լոյս իր ծնողաց եւ բոլոր ազգականներուն: Նոյն յաջողութիւնը կը բաղձանք իր պղտիկ եղբորը Ֆրէտին: Պր. Լեւոնի կը մաղթենք յառաջդիմութիւն նաեւ իր առաջադրած ճիւղին մէջ:

*** Շիրակոյէն տեղս ժամանեց Տիկ. Մարի Գարգոզեան՝ իր եղբորը Յակոբ Պ. Սըրբմեանի մօտ: Տիկ. Մարի պիտի հիւրասիրուի իր հօրեղբոր կնոջ Սօդիկ Գուրուկին, ինչպէս նաեւ բոլոր Սըրբմեաններու կողմէ:

*** Շիրակոյէն տեղս ժամանեց Տիկ. Պ. Ազնաւորեան իր փոքրիկ տղուն հետ: Տիկին Ազնաւորեան կը հիւրասիրուի իր ազգականներէն Տէր եւ Տիկին Թորոս եւ Գասպար Տօղուկեաններու կողմէ:

*** Լօս Անճէլըսէն մեր տարեց հայրենակիցը Պրն. Թ. Պապեան՝ ընտանեօք չորս օր հիւրասիրուեցաւ Պ. Խ. Սըրբմեանի տան մէջ, որմէ վերջ Պրն. Պապեան կրկին վերադարձաւ Լօս Անճէլըս:

*** Երևանի 4-ին Շիրակոյէն չոս ժամանեց Տիկին Աննա Խ. Տաղտիկեան եւ հիւրասիրուեցաւ իր մեծ հօրեղբոր Տէր եւ Տիկ. Հէրի Ս. Սըրբմեանի կողմէ: Երեկոյին հայրենակիցներու մեծ բազմութիւն մը եկած էր թէ՛ բարի զայուստ մաղթելու Տիկին Աննայի եւ թէ՛ աչքը լուսեղու Պրն. Սըրբմեանի եւ բոլոր ազգականներուն: Տիկինը պիտի հիւրասիրուի բոլոր Սըրբմեաններու կողմէ՝ կարգաւ:

ԳԻՆԵԿԱՅԵՐԿ

Կ. Ս. ՍԵՐԵՄԵԱՆ

ՀԱՆԿՊ.— Մայիս 13, Երեքշաբթի երեկոյ Պրն. Նիկողոս Գասապեան Լօրէնսէն Հալէպ ժամանեց: Չնդշոյ վերաշինացի տեղւոյս մասնաճիւղի վարչութիւնը եւ ուրիշ հայրենակիցներ կայարան փութացած էին մեր յարգելի հայրենակիցը դիմաւորելու համար: Ան ընդունուեցաւ խանդավառութեամբ եւ համակրանքով:

*** Մայիս 10-ին Տէր եւ Տիկ. Թ. Տապաղեան աղջիկ զաւակ մը ունեցան: Մեր խնդակցութիւնը կը յայտնենք:

*** Մեր սիրուած հայրենակիցներէն Պրն. Ազար Ազարեան (Լօրէնսէն) քանի մը շաբաթ առաջ ամուսնացաւ Ուրֆայի շնորհալի այրի տիկնոջ մը հետ: Պաակի արարողութեան ներկայ էին տեղւոյս Ամերիկեան հիւպատոսը եւ հայրենակիցներու խումբ մը: Պրն. Ազարեան մտադիր է ատեն մը չոս մնալ:

*** Երևանի 13-ին Գիւմրաթ Բաշոեան եւ իր աղջիկը Եղսա Հալէպէն մեկնեցան Մարսիլ: Բարի ճանապարհ եւ յաջողութիւն կը մաղթենք:

*** Երևանի 16-ին Պրն. Թորոս Եղիշեան անձնական գործով Հալէպէն Պաղտատ մեկնեցաւ: Բարի յաջողութիւն կը մաղթենք:

*** Երևանի 16-ին Հալէպի մէջ սեւ հողին յանձնեցինք մեր երիտասարդ հայրենակցուհին Օր. Կլարա Նուրիկեանին, 16 տարեկան ծաղիկ հասակին մէջ: Վաղամեռիկ օրիորդը այս տարի պիտի աւարտէր Կաթոլիկներու վարժարանը: Երեկոյն Կաթոլիկներու կատարուեցաւ 500է աւելի սղաւոր հանդիսականներու ներկայութեան: Մաղկեպատկներ զըրկած էին Չնդշոյ վերջ, Միութիւնը, Կաթոլիկներու վարժարանին աշակերտութիւնը եւ ուրիշներ: Մեր խորին ցաւակցութիւնը կը յայտնենք իր մօտաւոր եւ հեռաւոր պարագաներուն:

*** Մեր հայրենակիցներէն Պրն. Երանդիկեանի քոյրը Եղսա, որ Տիգրանակերտ կը գտնուէր, վերջերս Հալէպ եկաւ՝ իր հետ ունենալով իր աղջիկը Աննա եւ երկու փոքրիկ թոռնիկները: Մեր այս հայրենակիցները բոլորովին անձուկ վիճակի մը ենթարկուած ըլլալով՝ պարտք կ'իյնայ Լօրէնս գտնուող իրենց եղբորորդի Պրն. Միքայէլեանի վրայ շուտափոյթ օգնութեան հասնիլ:

Հալէպ, 18 Երևան 1928

Մ. ՓՈՒՍՈՒԼԵԱՆ

ԵՐԵՎԱՆ.— Նիւ Երեքէն քաղաքս ժամանեցին Տէր եւ Տիկին Ա. Տօգուկեան՝ չոս հաստատուելու համար: Բարի գալուստ կը մաղթենք իրենց եւ յաջողութիւն:

*** Միսինապոլիս Շիրակօ եկած է Տիկին Եօքսուկեան, որ կը հիւրասիրուի Տէր եւ Տիկին Թ. Եօքսուկեանի կողմէ:

*** Երևանի 30-ին տեղի ունեցաւ Պրն. Պ. Տաղտիկեանի ընդ Օր. Պօյաճեանի հարսանեկան հանդէսը, որու ներկայ էին ամուսնացեալներու բոլոր պարագաները, որոնք վայելեցին ուրախ ժամանցներ:

Մեր շնորհաւորութիւնները նորապսակ ամուսին եւ երջանիկ կեանք:

*** Հանդերձահաւաքութեան գործը կանոնաւորապէս կը շարունակուի. այժմ սկսուած է հայրենակիցներէ զուրս ուրիշներէ ալ հանդերձանքէն հաւաքելու գործին, երեք շաբթուան ընթացքին արդէն 80 կտոր հազուստ հաւաքուած է: Ասկէ զատ հաւաքուած են կօշիկներ ու գլխարկներ, արանց թէ կանանց:

*** Տէր եւ Տիկ. Գ. Կէօկճեան իրենց ինքնաշարժով մինչեւ Նիւ Երեք եւ Լօրէնս պտոյտ մը ընելէ յետոյ քաղաքս վերադարձան: Բարի գալուստ կը մաղթենք:

ԼՐԱՏՈՒ

ՋՈՒԹԱԿԱՀԱՐՈՒՀԻ ՕՐ. Մ. ՍՏԵՓԱՆԵԱՆ



Օր. Մարգրիտ Ստեփանեան, դուստրը մեր Պրն. Ստեփանի հայրենակցին Տէր եւ Տիկ. Ա. Ստեփանեանի եւ եղբորորդին Պրն. Պետրոս Ստեփանեանի, իր 13 տարեկան հասակին մէջ մեծ պատիւներով եւ զանազանքով մէջ՝ մասնաւորապէս զճաղատութեան՝ նկատելի յառաջդիմութիւն ցոյց տալով եւ մէտաւեր շահելով՝ այս տարի Երևանի ամառնախաղաթարանի զատնթացքը եւ յաջորդ տարի պիտի յաճախէր բազմոյս վարժարան:

Օր. Մ. Ստեփանեան այժմէն անուն հանած է իրրեւ վարպետ թափահարուհի: Իր նուազը շատ քաղցր է եւ ծափահարելի ցոյց տալանդը երաժշտական արուեստին մէջ: Ան շատ մը մրցումներու նակցած եւ միշտ ալ առաջին հանդիսացած է, պատիւ իրերով իր զաց եւ ազգակիցներուն: Կը շնորհաւորենք դեռաւոր Օրիորդը եւ Տիկին Ստեփանեանը, ինչպէս նաեւ Պրն. Պետրոս Ստեփանեանը՝ իր զաւակին եւ եղբորորդուին ցոյց տուած բարձր ձիրքերուն համար եւ բաղձանք ապագայ մեծամեծ յաջողութիւններ եւ փառքի պսակումներ:

ԼՕՐԷՆՍ.— Շիրակոյէն տեղս ժամանեցին Տէր եւ Տիկին Գրիգոր Վնոեան, որոնց կ'ընկերակցէր Պրն. Պետրոս Ասլանեան: Երեկոյն հիւրասիրուեցան Տէր եւ Տիկ. Նիկողոս Կոկիլեանի կողմէ: Երեկոյն Տիկին Վնոեանի ամուսնացեալը Տիկին Վնոեանի հետ միասին Լօրէնս մեկնեցան:

*** Գալիֆօրնիայէն Պրն. Մեկլոն Նաճարեան եւ Շիրակոյէն Պրն. Թորոս Խաչատուրեան տեղս ժամանեցին եւ հիւրասիրուեցան Տիկին Տաղտիկեաններու կողմէ:

*** Պրն. Պետրոս Եղեղեան Երևանի ամսուն իր դպրոցական ընթացքը աւարտեց եւ բարձրագոյն վարժարանի վկայականը ստացաւ:

Օր. Նուարդ Հաղարվարդեան Օլիվըր սքուլէն ստացաւ իր վկայականը: Մեր խնդակցութեան հետ կը մաղթենք ապագայ յաջողութիւններ մեր շրջանաւարտներուն:

*** Գործարանի մէջ Պրն. Մինաս Գազանճեանի երկու մատնիքը նասուեցան մեքենաներէն: Մեր ցաւակցութեան հետ կը մաղթենք իր ամուսնացեալին:

*** Մէկ քանի շաբաթ առաջ Պրն. Եղիշեան փապուճեան Պրն. Նի Զեմբըլ հիւանդանոցին մէջ գործողութեան մը ենթարկուեցաւ՝ ժամ տուն բերուած է: Մեր ցաւակցութիւնը կը յայտնենք եւ կը թենք ապաքինում:

*** Երևանի 16, Հինգշաբթի երեկոյ տեղի ունեցաւ Պրն. Եղեղեանի ամուսնութեան հանդէսը Լօվէլ Պրն. Խաչատուր Ազնաւորեանի բնակարանին մէջ, կնքահայրութեամբ Տէր եւ Տիկին Խաչատուրեանի: Մեր խնդակցութիւնը յայտնելով կը մաղթենք երեկոյն օրեր:

Չնդշոյ վերջ. Միութեան Լօրէնսի մասնաճիւղին դաշտահայր տեղի պիտի ունենայ Օգոստ. 19-ին, Յիւնիքըր Փարքի մէջ: Մանրանութիւնը յայտագրով:

Ս. ՅԱՅԵՐԵԱՆ